

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը հայտնում է հանրությանն ի գիտություն, թե Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովանավորության ներքո լիբանանահայ կարոտյալների օգտին հանգանակված են առ 31 դեկտեմբեր 1976 թվականը ստորև նշված գումարները և նույն տարվա ընթացքում մաս առ մաս փոխանցված են ամբողջությամբ Վեհափառ Հայրապետի՝ Բեյրութում կազմած «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»՝ ընդ նախագահությամբ տիար Հովհաննես Գասպարյանի.

1. Մայր Աթոռից	20000.00 դոլլար
2. Նյու-Յորքի առաջնորդարանի միջոցով . . .	20998.80 դոլլար
3. Նյու-Յորքի առաջնորդարանի միջոցով	4998.80 դոլլար
4. Գալուստ Կյուլպենկյան հաստատությունից . .	10000.00 դոլլար
5. Ժնևից՝ հանգանակիչ հանձնաժողովի միջոցով 35000 շվեյցարական ֆրանկ	13618.65 դոլլար
6. Լոնդոն՝ հանգանակիչ հանձնաժողովի միջոցով՝ 5000 ստեռլինգ (Ս. Սարգիս եկեղեցու Թրաստիից 2500 ստեռլինգ, մնացյալը՝ 297 նվիրատուներից)	8575.00 դոլլար
7. Տիար Նապոլեոն Պուլլուքյան (Լիոն) . .	5000.00 դոլլար
8. Տիար Երվանդ Հյուսիսյան (Միլան) . . .	5000.00 դոլլար
9. Տիար Կոպեռնիկ Սեֆերյան՝ 2000 դոլլար (Բուենոս-Այրես)	1998.80 դոլլար
10. Տիար Հակոբ Սեֆերյան (Միլան)	2000.00 դոլլար
11. Տիար Կ. Փափազյան (Վիեննա)՝ 7500 շվեյցարական ֆրանկ	2912.62 դոլլար
12. Վիեննայի Ուսանողների միություն՝ 52100 շիլլինգ	2824.79 դոլլար
13. Ժնևի հանգանակիչ հանձնաժողովից՝ 3500 շվեյցարական ֆրանկ	1400.00 դոլլար
14. Լիոնից՝ 1162 շվեյցարական ֆրանկ	451.26 դոլլար
15. Ավստրալիայից՝ անանուն նվիրատու	400.00 դոլլար
16. Անանուն նվիրատու	523.80 դոլլար
17. Չորս անանուն նվիրատուներ	167.02 դոլլար
18. Մայր Աթոռի հաշվից լրացում	300.00 դոլլար
Ընդամենը՝	101169.54 դոլլար
Փոխանցված է Բեյրութի «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»՝ . .	97767.84 դոլլար
Մնացորդ՝	3401.70 դոլլար

Բացի վերոհիշյալ գումարներից, Ֆրանսիայի շրջանում, ընդ նախագահությամբ հայրապետական պատվիրակ գերաշնորհ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի, հանգանակիչ հանձնաժողովի կողմից հանգանակված է (1.031.624 ֆրանսիական ֆրանկ) շուրջ 210.000 դոլլար, և նվիրատուների ցուցակները հրապարակված են Փարիզի «Յառաջ» և «Աշխարհ» թերթերում, հետևյալ թվականներին՝ 1975-ի 10 և 18 դեկտեմբերին, 1976-ի 3 և 23 հունվարին, 11 և 17 փետրվարին, 4 և 11 մարտին, 8 ապրիլին, 18 մայիսին, 14 սեպտեմբերին, 21 հոկտեմբերին, 11 և 21 դեկտեմբերին:

Ֆրանսահայ նվիրատուներից գանձված գումարները հանգանակիչ հանձնաժողովի կողմից փոխանցված են ուղղակի Բեյրութ՝ «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»:

Որով, առ 31 դեկտեմբեր 1976 թ. Մայր Աթոռիս հովանավորության ներքև հանգանակված ընդհանուր գումարը կազմում է 307.767 դոլլար՝ ամբողջությամբ փոխանցված Բեյրութի «Լիբանանահայ օգնության կենտրոնական հանձնախմբին»: Չփոխանցված մնում է Մայր Աթոռում 3401 դոլլար:

Մայր Աթոռս իր խորին շնորհակալությունն է հայտնում վերոհիշյալ բոլոր բարեսիրտ նվիրատուներին, ինչպես նաև իր սրտագին գնահատանքը՝ Բեյրութի «Լիբանանահայ օգնության հանձնախմբին» և բոլոր հանգանակիչ մարմիններին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
26 հունվարի 1977 թ.